

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ը*

*2021 թ.*

28.12.2021

## **Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար Լանջաղբյուր համայնքի ղեկավարին մեղադրանք է առաջադրվել**

Քննչական կոմիտեն տեղեկացնում է, որ Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում իրականացված քննչական և դատավարական այլ գործողությունների արդյունքում պարզվել են Լանջաղբյուր համայնքի ղեկավարի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքի հանգամանքները:

«Քննությանը փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վերջինս, տեղեկանալով, որ Հայաստանի Հանրապետությունում գործող հեռահաղորդակցման ծառայություններ մատուցող երկու տարբեր ընկերություններ ցանկանում են համայնքի վարչական տարածքում ալեհավաք տեղակայել և դրա համար կնքել հողի վարձակալության պայմանագիր, շահադիտական դրդումներից ելնելով, համայնքի ավագանու որոշումների հիման վրա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն ունեցող երկու հողամաս աճուրդով վաճառել է կնոջը: Վերջինս, ստանալով նշված հողամասերի սեփականության իրավունքի վկայականները, դրանք տվել է վարձակալության՝ վերոնշյալ ընկերություններին՝ տարեկան 480000 և 720000 ՀՀ դրամ վարձավճարով:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ Լանջաղբյուր համայնքի ղեկավարին մեղադրանք է առաջադրվել՝ Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (երկու դրվագ): Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննությունը շարունակվում է», - նշված է հաղորդագրության մեջ:

<https://hetq.am/hy/article/139512>

25.12.2021

## **Վարդենիսի նոր ավագանու նիստը հետաձգվեց Գնել Սանոսյանի նախաձեռնությամբ**

Ինտրիզները Վարդենիսի քաղաքապետի ընտրության շուրջ շարունակվում են: Դեկտեմբերի 27-ին տեղի էր ունենալու Վարդենիս խոշորացված համայնքի նոր ավագանու առաջին նիստը, ընտրվելու էր համայնքի ղեկավար: Սակայն այսօր պարզ դարձավ, որ նիստը հետաձգվելու է մեկ շաբաթով:

Վարդենիսի ընդդիմադիր կոալիցիայի համար, որը ավագանիում ՔՊ-ի նկատմամբ մեկ ձայնի առավելություն ունի՝ 14/13 հարաբերությամբ, պատրաստվում էր երկուշաբթի քաղաքապետի իր թեկնածուին ընտրել՝ Տորֆավանի գյուղապետ Ահարոն Խաչատրյանին, սա անսպասելի հարված էր: «Ոչ մի լավ բան չենք սպասում: Էլի մի կեղտոտ բան մտածել են, մարկանց վրա կարող են ճնշել, եսիմ, ինչ են մտածել», - ասում է մեր զրուցակիցը «Ահարոն Խաչատրյան» դաշինքից:

Նա համոզված է, որ «կեղտոտ բան մտածողը» մարզպետ Կարեն Սարգսյանն ու ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանն են, որոնք շատ ծանր են տանում այն հանգամանքը, որ իրենց հարազատ մարզում ընդդիմությունը «կրում» է ՔՊ-ին և իր քաղաքապետն է ունենալու:

Օրենքով ավագանու առաջին նիստը պետք է գումարվեր ավագանու անդամների ընտրվելու մասին որոշման հրապարակմանը հաջորդող երկուշաբթի օրը, ժամը 11.00: Ո՞ր օրենքով է նիստը հետաձգվել, ինչո՞ւ: Հարցերն ուղղեցինք Գեղարքունիքի մարզպետարանի Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վանիկ Հարությունյանին:

- ՏԻՄ մասին օրենքով նախարարությունը համապատասխան շրջափերական է ուղարկել մեզ ձեռնարկի տեսքով, որում ասվում էր, որ նիստը պետք է գումարվեր ավագանու անդամների ընտրվելու մասին որոշման հրապարակմանը հաջորդող երկուշաբթի, 11.00: Դրանից հետո տարածքային կառավարման նախարարը ԿՀՀ նախարար Սուկույանի հետ քննարկել է հարցը և նոյեմբերի 20-ի կողմերը հայտարարի են եկել, որ այլևս չմիջամտեն ՏԻՄ-ի գործերին, թող ՏԻՄ-ը որոշի, շաբաթվա որ օրը լինի նիստը և որ ժամին, որ ՏԻՄ-ը ազատ լինի իր գործառույթում:

**-Եթե իրենք նոյեմբերի 20-ին էին որոշել, որ ՏԻՄ-ն է նիստի օրը որոշում, ինչո՞ւ մարդկանց չէին ասել, բոլորը կարծում էին, թե դեկտեմբերի 27-ին է նիստը:**

-Նոյեմբերին մենք ունեինք նախկին ձեռնարկը: Որից հետո մենք նորից շրջափերական ենք ուղարկել նոյեմբերի 24-ին, բոլոր համայնքներին՝ 57 համայնքներին, որտեղ արդեն օրն ու ժամը նշված չեն եղել:

**-Բայց որքան՞ով է ճիշտ, որ այսօրվա գործող ավագանին որոշի նիստի օրը, չէ՞ որ այն դեկավարում է գործող ՔՊ-ական քաղաքապետը, որն ինքն էլ թեկնածու է, ու պարտվող թեկնածու: Նա ո՞նց պիտի որոշի, թե երբ լինի նիստը, որին ինքը տապալվելու է: Ստացվում է, որ մրցակիցներից մեկն է որոշում:**

-Ես հակասությունը չեմ տեսնում: Ինչ պիտի լինի, եթե մի քանի օր հետո լինի նիստը:

**-Մարդիկ ենքան վատ բան են տեսել, որ մտավախություններ ունեն, թե մի նոր խարդավանքի են գնում:**

- Հա, կասկածի որդը կա, բայց տրամաբանությամբ որ մտածում ես, երկու-երեք օրում ի՞նչը պիտի փոխվի: Օրը կգա, բարին հետը:

<https://hraparak.am/post/9b9ae6eb6e6e1da6d8e7de69a2807dab>

20.12.2021

## **Դեկտեմբերի 20-ից մինչև 2022-ի հունվարի 15-ը Սեւանա լճում դադարեցվում է արդյունագործական ձկնորսությունը**

Գեղարքունիքի մարզպետարանում այսօր՝ դեկտեմբերի 20-ին, կայացած խորհրդակցության ընթացքում քննարկվեց Սեւանա լճում արդյունագործական ձկնորսության ժամանակավոր դադարեցման միջոցառումների ծրագիրը՝ կապված սիզի ձկադրման ժամանակահատվածի հետ:

Մարզպետարանից [NEWS.am](https://www.news.am)-ին հայտնում են, որ խորհրդակցությունը վարեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ Ոստիկանության, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի, Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ եւ համայնքների ղեկավարներ:

Բացելով հանդիպումը՝ Գեղարքունիքի մարզպետը ներկայացրեց ՀՀ Շրջակա միջավայրի, ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունների, ՀՀ Ոստիկանության, Գեղարքունիքի մարզպետարանի, ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի եւ Երեւանի քաղաքապետարանի պատասխանատվությամբ մշակված համատեղ միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը, համաձայն որի՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2022 թվականի հունվարի 15-ը Սեւանա լճում ժամանակավորապես դադարեցվում է արդյունագործական ձկնորսությունը:

<https://news.am/arm/news/678446.html>

20.12.2021

## **Իրավիճակը ամեն րոպե կարող է պայթունավտանգ լինել, թշնամին օր-օրի ավելի է ամրապնդվում Գեղամասարի դիրքերում. Հակոբ Ավետյան**

Իրավիճակը ամեն րոպե կարող է պայթունավտանգ լինել, թշնամին օր-օրի ավելի է ամրապնդվում Գեղարքունիքի մարզի այն դիրքերում, որոնք Գեղամասար համայնքի վարչական տարածքների մեջ են. **Yerkir.am**-ի հետ զրույցում ասաց Գեղամասար համայնքի ղեկավար Հակոբ Ավետյանը:

«Մեր խոտհարքերը այդ հատվածներում է գտնվում, թշնամին կիլոմետրերով եկել է առաջ», - ասաց նա:

Անդրադառնալով Վարդենիս խոշորացված համայնքի ՏԻՄ ընտրությունների արդյունքներին եւ իշխանության ռեպրեսիաներին՝ Ավետյանն ասաց. «Մենք բոլորով կողջունենիք, եթե ՔՊ թեկնածուն իսկապես ընտրվեր, բայց կառավարությունը բռնաճշտումերով եւ ընդդիմադիր ուժի ղեկավարին ձերբակալելով է ուզում իր թիմից ղեկավար նշանակել»:

Հիշեցնենք, որ ընդդիմադիր «Ահարոն Խաչատրյան» եւ «Միասնական Վարդենիս» դաշինքները ՏԻՄ ընտրություններից հետո, ընդհանուր համաձայնության գալով, որոշեցին կռալիցիա կազմել: Արդյունքում՝ Վարդենիսում ընդդիմությունը հաղթեց ՔՊ-ին՝ ունենալով ընդհանուր՝ 27 մանդատից 15-ը: ՔՊ-ն, չհաշտվելով պարտության հետ, դիմեց տարածքային ընտրական հանձնաժողով՝ 6 ընտրատեղամասում վերահաշվարկ իրականացնելու խնդրանքով, մինչդեռ ամբողջ Վարդենիսում 39 ընտրատեղամաս է եղել: Պարզվում է՝ ընտրվել են այն ընտրատեղամասերը, որտեղ ՔՊ-ն խայտառակ պարտություն է կրել:

Վերահաշվարկի արդյունքում ՔՊ-ին հաջողվեց ընդդիմադիր դաշինքներից մեքենայությունների շնորհիվ, 1 ձայնի տարբերությամբ, 1 մանդատ կորզել, սակայն տեսնելով, որ նույնիսկ այս պարագայում է ընդդիմությունը հաղթող դուրս գալիս, դիմել է ռեպրեսիաների՝ ձերբակալելով ընդդիմության առաջնորդ Արամ Հարությունյանին:

### **Լիանա Սարգսյան**

Մանրամասները՝ տեսանյութում <https://www.youtube.com/watch?v=pHXWFLJTOIY>

<https://www.yerkir.am/news/view/256892.html>

**Կառավարությունը պարտավոր է ապահովել համայնքների ավագանիների ընտրված և կալանավորված անդամների մասնակցությունն այդ ավագանիների առաջին նիստերին. ՄԻՊ–ը հիմնավորումներ է ներկայացրել**

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը հայտարարություն է տարածել համայնքների ավագանիների նիստերի ավագանիների կալանավորված անդամների մասնակցության վերաբերյալ՝ ներկայացնելով հիմնավորումներ: Հայտարարությունում ասվում է. «Կառավարությունը և մասնավորապես՝ Արդարադատության նախարարությունն ուղիղ պարտավորություն ունեն ապահովելու, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում համայնքների ընտրված ավագանիների այն անդամները, որոնք կալանավորված են, մասնակցեն այդ ավագանիների առաջին նիստերին և չզրկվեն իրենց սահմանադրական իրավունքից: Խոսքը համայնքների նորընտիր ավագանիների այն նիստերի մասին է, որտեղ պետք է որոշվի համայնքի ղեկավարի ընտրության հարցը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, մասնավորապես, բողոքներ են հասցեագրել Վարդենիս և Վանաձոր համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցած և ավագանու անդամ ընտրված համապատասխանաբար՝ Արամ Հարությունյանը և Մամիկոն Ասլանյանը: Նրանք գտնվում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում՝ քրեական գործերով կալանավորվածի կարգավիճակում:

Նրանք երկուսն էլ բողոքներով տեղեկացրել են, որ իրենց կալանավորումները նպատակ ունեն այնպես անել, որ իրենք չմասնակցեն ավագանիների առաջին նիստերին և այդ պարագայում երկու դեպքում էլ ձայներն այնպես կբաշխվեն, որ և՛ Արամ Հարությունյանը, և՛ Մամիկոն Ասլանյանը չեն կարողանա ընտրվել համայնքի ղեկավար: Ավելին, ըստ բողոքների՝ չմասնակցության դեպքում իրենք ևս կզրկվեն քվեարկելու, այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված ընտրելու և ընտրվելու իրավունքից:

Արանից բացի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է ահազանգեր կալանավորումներից հետո ավագանիների նշված անդամների նկատմամբ ճնշումների մասին. նրանք տեղերում՝ իրենց համայնքներում ներկայացվում են՝ որպես հանցանք կատարած և արդեն իսկ դատապարտված ու համայնքի ղեկավար դառնալու հնարավորությունից առհասարակ զրկված անձինք: Այս մասին են նշել հենց բողոք ներկայացրած անձինք:

Արամ Հարությունյանի և Մամիկոն Ասլանյանի բողոքների, քրեակատարողական հիմնարկներում նրանց հետ առանձնազրույցների, անհրաժեշտ փաստաթղթերի համադրված ուսումնասիրությունների արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է հետևյալը:

Նախ, ավագանիների այդ անդամների նկատմամբ գործում է անմեղության կանխավարկածի երաշխիքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի պարտադիր բաղադրիչ: Հետևաբար, նրանց նկատմամբ վերաբերմունքը չի կարող խաթարել այդ սահմանադրական և միջազգային կոնվենցիոն պահանջը:

Դրանից բացի, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը երաշխավորված է Սահմանադրության մակարդակով և, հենց Սահմանադրությունն ինքը թվարկում է այդ իրավունքի թույլատրելի սահմանափակումների սպառիչ շրջանակը:

Ըստ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

Այսինքն՝ Սահմանադրությունն ամրագրում է քաղաքացուն ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկելու առնվազն երկու պարտադիր պայման, որոնք պետք է առկա լինեն միաժամանակ՝ 1) դատապարտված լինելը և 2) պատիժ կրելը: Ընտրվելու իրավունքի դեպքում Սահմանադրությունն ավելի առաջ է գնացել՝ ամրագրելով այդ իրավունքից զրկելուց պաշտպանություն ցանկացած հանցանքի պարագայում:

«Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 42.2-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ «Համայնքի ղեկավարի ընտրությունն անցկացվում է նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում»:

Այսինքն՝ Սահմանադրությունն ու Ընտրական օրենսգիրքը նախատեսել են, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ՀՀ քաղաքացու ընտրվելու իրավունքի վերջնական իրացումը չի սահմանափակվում միայն ավագանու անդամ ընտրվելով, այլ այն վերջնական լուծվում է համայնքի ղեկավարի ընտրության փուլով՝ նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում: Այլ կերպ ասած, համայնքի ղեկավարի ընտրության համար անցկացվող առաջին նիստը քաղաքացու՝ Սահմանադրությամբ երաշխավորված ընտրվելու իրավունքի իրացման գործընթացի անբաժան մասն է:

Վարդենիս և Վանաձոր համայնքների դեպքում ավագանիների ընտրված և ներկայում կալանավորված անդամների պարագայում Սահմանադրության 48-րդ հոդվածով պահանջվող պայմաններն առկա չեն, անգամ չկա պարտադիր պայմաններից որևէ մեկը՝ 1) չկա դատապարտված անձ, 2) չկա պատժի կրում:

Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է նաև ՀՀ քաղաքացիների ընտրելու սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից:

Հարցն այն է, որ քրեական գործերով կալանավորված են ավագանու անդամ ընտրված ՀՀ այն քաղաքացիները, որոնք քաղաքական ուժերի ղեկավարներ են և նախընտրական քարոզարշավին մասնակցել են՝ որպես համայնքի ղեկավարի թեկնածուներ:

Այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրի կողմնակից քաղաքացին նրանց ընտրել է այն ակնկալիքով, որ հենց այդ անձինք են լինելու իրենց համայնքի ղեկավարը: Այլ կերպ ասած, քաղաքացու ընտրական իրավունքի վերջնական և սպառիչ իրացումը ենթադրում է ավագանիների այդ անդամների կողմից համայնքի ղեկավարի ընտրության համար անցկացվող ավագանու առաջին նիստին մասնակցելու և քվեարկելու իրավունքի իրացում:

Մա է ներկայացուցչական ժողովրդավարության էությունը: Այս կերպ է, որ ընտրական իրավունքի շնորհիվ ձևավորվում է երկրում ժողովրդավարության համակարգը: Նույն սկզբունքը վերաբերում է նաև խորհրդարանական ընտրություններին և Կառավարության ձևավորմանը:

Ուստի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացրած ավագանիների անդամներ Արամ Հարությունյանի (Վարդենիս) և Մամիկոն Ասլանյանի (Վանաձոր) ընտրվելու

սահմանադրական իրավունքը լիարժեք երաշխավորելու համար ՀՀ կառավարությունը, իսկ ավելի կոնկրետ՝ ՀՀ արդարադատության նախարարությունը պետք է ապահովի համապատասխան ավագանիների առաջին նիստերին նրանց մասնակցությունը և քվեարկության իրավունքի իրացումն ըստ առաջնահերթության, հետևյալ սկզբունքով.

1) նրանց կալանքից ազատ արձակելով, ինչը հնարավորություն կտա ապահովել համապատասխան ավագանիների նիստերին նրանց լիարժեք մասնակցությունը: Հակառակ պարագայում՝ ստեղծված իրավիճակում կալանքի տակ նրանց հետագա պահելու իրավաչափությունը քրեական հետապնդման մարմիններից ու դատարաններից պահանջում է բարձր շեմի հաղթահարում ու բարձր չափանիշներով հիմնավորում,

2) թեև կալանավորված վիճակում, բայց ավագանիների նիստերին ֆիզիկական մասնակցությունն ապահովելով,

3) թեև կալանավորված վիճակում, բայց Ջուս (Zoom), Սկայպ (Skype) կամ որևէ այլ եղանակով ապահովելով ավագանիների նիստերին նրանց մասնակցությունն ու ընտրվելու իրավունքի իրացումը:

Թվարկված կետերից որևէ մեկի չկատարումը կառաջացնի մարդու ընտրվելու սահմանադրական իրավունքի խախտում, ինչպես նաև կլինի խնդրահարույց ընտրելու սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից: Ավելին, հարցը հրատապ է՝ հաշվի առնելով ավագանիների առաջին նիստերի անցկացման ժամկետները:

Քանի որ ավագանիների նշված անդամները գտնվում են ազատությունից զրկված (խափանման միջոց կալանք) վիճակում, այն է՝ Արդարադատության նախարարության ՔԿՀ-ներում, ապա նրանց ընտրվելու սահմանադրական իրավունքի իրացումը պետք է ապահովվի ՀՀ Կառավարության, մասնավորապես՝ Արդարադատության նախարարության կողմից՝ անկախ քրեական հետապնդման մարմնի կամ կալանքի միջնորդությունը բավարարած դատարանի վերաբերմունքից:

Այսինքն՝ չի կարող այս հարցի լուծումը կախվածության մեջ դրվել քրեական գործ քննող մարմինների կամքից, քանի որ այն կապ չունի նրանց կողմից քննվող քրեական գործի առարկայի հետ և, բացի այդ էլ խոսքը գնում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված ընտրական իրավունքի մասին, որից զրկելու հիմքեր կոնկրետ իրավիճակում չկան առհասարակ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի այս հայտարարությունը կուղարկվի ԵԱՀԿ դիտորդական առաքելությանը, միջազգային այլ կառույցներին, դիտորդական կազմակերպությունների, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Այն հայտարարությունը նաև կդրվի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական հարցման տեքստում և հրատապ պարզաբանումների պահանջով կուղարկվի ՀՀ արդարադատության նախարարին»:

<http://yerkir.am/news/view/256907.html>

20.12.2021

## Մանդատագողություն՝ օրը ցերեկով կամ ի՞նչ է կատարվում Վարդենիսում

Չհաշտվելով Վարդենիս խոշորացված համայնքի ընտրություններում կրած պարտության հետ՝ իշխանություններն անցել են մանդատագողության. 6 տեղամաս վերահաշվարկելու արդյունքում՝ «Միասնական Վարդենիս» դաշինքից վերցվել է 19 քվեաթերթիկ և դրվել «Քաղաքացիական պայմանագրի» օգտին: Այդ ճանապարհով ապահովելով 1 քվեաթերթիկի առավելություն՝ իշխանությունները կորզել են 1 մանդատ: Դրանից անմիջապես հետո ձերբակալվում, այնուհետև կալանավորվում է «Միասնական Վարդենիսի» ցուցակը գլխավորող Արամ Հարությունյանը:

Վերոհիշյալ գործողությունների արդյունքում՝ Վարդենիսի ավագանու՝ գումարվելիք նիստում ձայներն արհեստականորեն հավասարեցվել են (13/13):

«Միասնական Վարդենիսը» բողոքարկել է ՏՀՀ-ի մանդատների բաշխման վերաբերյալ որոշումը, և Վարչական դատարանի կողմից հայցը վարույթ ընդունելու արդյունքում կասեցվել է այն: Ելնելով վերնշրջալից՝ դեռևս չի կայացել ավագանու առաջին նիստը:

Այս ամենի հետ մեկտեղ խախտված է Արամ Հարությունյանի՝ պաշտպան ունենալու իրավունքը, նքննիչի գործողությունների արդյունքում՝ արդեն 1 շաբաթ է, ինչԱրամ Հարությունյանի պաշտպանը չի ներգրավվել որպես պաշտպան և չի կարողանում այցելել իր պաշտպանյալին:

Փաստորեն՝ իշխանությունը որևէ ձևով չի թաքցնում, որ պատրաստ է բոլոր ապօրինություններին, ընդհուպ մինչև մարդու իրավունքների՝ Սահմանադրությամբ ամրագրված կոպտագույն ոտնահարման: Եվ այս ամենի նպատակը մեկն է՝ բռնագավթել տեղական իշխանությունը **Վարդենիսում**:

<http://yerkir.am/news/view/256912.html>

16.12.2021

## Նիկոլի «գումում» մանդատները ՏՀՀ-ի փոխարեն հանձնում է մարզպետը

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական էջում «ավետիս» է հրապարակվել, ըստ որի՝ Գեղարքունիքի մարզպետը վկայականներ է հանձնել ՏԻՄ ընտրություններում հաղթանակած քաղաքական ուժերի ավագանու ցուցակի առաջին համարներին:

Նշվում է, որ *«...Գեղարքունիքի մարզպետ Կարեն Մարգարյանը թիվ 19, 20, 21 տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից տրված վկայականները Գավառ խոշորացված համայնքում՝ «Գուրգեն Մարտիրոսյան» դաշինքի կողմից առաջադրված ավագանու ցուցակը գլխավորող Գուրգեն Մարտիրոսյանին, Մարտունի խոշորացված համայնքում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից առաջադրված ավագանու ցուցակը գլխավորող Հովհաննես Հովեյանին և Սևան խոշորացված համայնքում՝ «Մարգիս Մուրադյան» դաշինքի կողմից առաջադրված ավագանու ցուցակը գլխավորող Մարգիս Մուրադյանին հանձնեց ավագանու անդամի վկայականներ»:*

Նախ՝ վերոնշյալ պարբերություն-նախադասության կազմողը լավ կաներ, որ նախադասության վերջում հիշեր, թե սկզբից ինչպես է սկսել այն: Բայց դա՛ մի կողմ:



Այստեղ աբսուրդը և խայտառակությունն այն է, որ արդեն մանդատները հանձնում է ոչ թե SCՀ-ն, այլ, ոչ ավելի, ոչ պակաս, մարզպետը: Պետական համակարգի առավել զանգվածային բռնաբարում, ինչպիսին տեղի է ունենում Նիկոլի օրոք, դժվար է հիշել:

Շեշտենք՝ կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովները ապաքաղաքական մարմիններ են, և դրանց գործառույթները պատվիրակել քաղաքական որոշումներով նշանակված պաշտոնյաներին, այդ թվում՝ մարզպետերին, ուղղակի նշանակում է կազմաքանդել ընտրական համակարգը: Բնականաբար, սույն գործելաձևը վատ ապացույցն է այն բանի, որ Նիկոլի օրոք ընտրությունները երբեք չեն կարող լինել անկախ և արդար:

ՀՀ-ն այդ իմաստով կարող է գրանցվել Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես մի պետություն, որտեղ ով ինչ ուզում՝ անում է, դեկավար կոչեցյալի սիրտը ում ուզում՝ բռնում է, ում ուզում՝ հերոսացնում, ում ուզում՝ դավաճան կարգում, և այսպես շարունակ:

<https://www.yerkir.am/news/view/256643.html>

12.12.2021

## Գավառ խոշորացված համայնքում ՔՊ-ն պարտվել է գործող համայնքապետին

Գեղարքունիքի մարզի Գավառ խոշորացված համայնքում ՔՊ-ն պարտվել է գործող համայնքապետին: Նշենք, որ այստեղ ընտրապայքարին մասնակցել է 3 քաղաքական ուժ՝ «Գուրգեն Մարտիրոսյան», «Մեր համայնքը» դաշինքները և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը:

### 2021թ. դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրություններ Գավառ համայնքի թեկնածուները



«Գուրգեն Մարտիրոսյան» դաշինքը գլխավորում է Գավառի ներկայիս համայնքապետ Գուրգեն Մարտիրոսյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորում է ԱԺ քրական պատգամավոր Նարեկ Գրիգորյանը, որը նորատուսցի է:

Գործող քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանի օգտին քվեարկել է ընտրողների 51 տոկոսը, Քաղաքացիական պայմանագրի օգտին՝ 40 տոկոսը, «Մեր համայնքը» դաշինքի օգտին՝ 6 տոկոսը:

Աղբյուր՝ Փաստինֆո

<https://www.pastinfo.am/hy/news/2021/12/06/60zabd414/1313961>

10.12.2021

## **Ադրբեջանական հարձակմանը դիմակայելիս գոհվել է շարքային Վահե Վաղարշակի Մանասերյանը. կա 8 վիրավոր, 6-ի վիճակը ծանր է**

Դեկտեմբերի 10-ին ՀՀ արևելյան ուղղությամբ (Գեղարքունիքի մարզ) Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումների ձեռնարկած նախահարձակ գործողություններին դիմակայելու ընթացքում գոհվել է ՀՀ ՊՆ N գորամասի ժամկետային զինծառայող, շարքային Վահե Վաղարշակի Մանասերյանը (ծնվ. 2002թ.): Այս մասին հայտնում են ՀՀ ՊՆ-ից:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիշտը և զորակցություն հայտնում գոհված զինծառայողի ընտանիքի անդամներին, հարազատներին և ծառայակիցներին:

Եվս ութ զինծառայող վիրավոր է: Վեց զինծառայողի վիճակը գնահատվում է ծանր, մյուս երկուսինը, համապատասխանաբար, միջին և թեթև:

<https://www.yerkir.am/news/view/256046.html>

09.12.2021

## **ՏԵՍԱՆՅՈՒԹ. Գավառի ընտրված թեկնածուն մեզ է աջակցում, Վարդենիսում էլ ՔՊ-ի թեկնածուն է անցնելու. Հայկ Սարգսյան**

Գավառի ընտրված համայնքապետը նույնպես սատարում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Մա ոչ թե «Ժողովուրդ» օրաթերթի, այլ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի համոզմունքն է: Խոսքը Գավառ խոշորացված համայնքում առավելագույն ձայներով՝ 54 %-ով համայնքապետ ընտրված «Գուրգեն Մարտիրոսյան» դաշինքի համայնքապետի թեկնածու Գուրգեն Մարտիրոսյանի մասին է՝ Գավառի գործող քաղաքապետի: Նշենք, որ նա «Քաղաքացու որոշում» կուսակցությունն է ներկայացնում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատգամավոր Հայկ Սարգսյանը մանրամասնեց, որ խորհրդարանական վերջին ընտրություններում Մարտիրոսյանն իրենց՝ ՔՊ-ին է աջակցել: Բայց ՔՊ-ն իր թեկնածուն ուներ՝ պատգամավոր Նարեկ Գրիգորյանը, ստացվում է՝ երկու թեկնածու ունեիք. հարցին պատգամավոր Սարգսյանն արձագանքեց. «Այո, կարող ենք նաեւ այդպես մեկնաբանել: ՔՊ-ն մեզ չի ներկայացնում, բայց մեր շատ ընկերներ սատարել են ընտրված թեկնածուին՝ պայմանավորված ընկերական կապով ու խորհրդարանական վերջին ընտրությունների ժամանակ իր ունեցած ավանդով ու ներդրումով, որ ազդել են արտահերթ ընտրության արդյունքների վրա»:

<https://www.youtube.com/watch?v=4D7IIQ3mxZQ>

<https://armlur.am/1153500/>

09.12.2021

## **Տեսանյութ. Վարդենիսցիները շարունակում են ճանապարհը փակ պահել. ինչ է այս պահին կատարվում**

Վարդենիսի բնակիչները շարունակում են փակ պահել մայրուղին: Հիշեցնենք, որ այսօր կալանավորման միջնորդություն է ներկայացվել դատարան «Միասնական Վարդենիս» դաշինքի ցուցակը գլխավորող Արամ Հարությունյանին, դրանով նպատակ ունենալով վերջինիս գրկել համայնքի ղեկավարի ընտրությանը մասնակցելու հնարավորությունից, ինչով և փորձ է արվում ապահովել իրենց համար ցանկալի արդյունք:

<https://politik.am/am/tesanyut-vardeniscinery-sharunakum-en-chanaparhy-pak-pahel-inch-e-ays-pahin-katarvum>

09.12.2021

## **Վարդենիսում բողոքի ակցիա է ձեռքարկվել են ՏԻՄ ընտրություններում հաղթած դաշինքի ղեկավարին**

Իշխանությունները, չհաշտվելով Վարդենիսում պարտության հետ, վարչական, դատական, ուժային մեթոդների կիրառմամբ փորձում են նվաճել Վարդենիսի ավագանին: Այդ նպատակով նրանք ձեռքարկվել են «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի ցուցակը գլխավորող Արամ Հարությունյանին:

Վարդենիսցիները, հաջակություն ընդդիմադիր դաշինքի առաջնորդի, փողոց են փակել:

Տեսանյութում առկա են հայիռյանքներ:

Նշենք, որ այս առնչությամբ «Միասնական Վարդենիս» դաշինքը հայտարարություն է տարածել, որը ներկայացնում ենք ստորև.

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Վարդենիս խոշորացված համայնքում կայացած ավագանու ընտրությունների արդյունքում 12 մանդատ ստացել է «Քաղաքացիական պայմանագիրը», 10՝ «Ահարոն Խաչատրյան» կուսակցությունների դաշինքը, 5՝ «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը:

Ելնելով արդյունքներից՝ «Ահարոն Խաչատրյան» կուսակցությունների դաշինքը և «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը Համագործակցության և համայնքում տեղական իշխանության մարմինները միասնաբար ձևավորելու մասին հայտարարություն են ստորագրել:

Իշխանությունները, սակայն, չհաշտվելով պարտության հետ և վարչական, դատական, ուժային մեթոդների կիրառմամբ, վախեցնելով ու զոռբայությամբ փորձում են նվաճել Վարդենիսի ավագանին: Հիշեցնենք՝ իշխանական գործիչներից մեկը՝ պատգամավոր Հայկ Սարգսյանը, հայտարարել է, որ ավագանու անդամները կարող են մտքափոխվել և ձայն տալ ՔՊ-ին:

Այժմ փորձ է արվում ԿԸՀ-ի միջոցով մեկ մանդատ իլել դաշինքներից՝ թվային հարաբերակցությունը դրանով դարձնելով 14/13: Սակայն 13 մանդատը ևս չի բավարարում ՔՊ-ին՝ համայնքապետ ընտրելու համար: Ելնելով դրանից՝ իշխանությունները փորձում են ձեռքարկելու ընտրությունների միջոցով ստանալ ձայնային առավելություն: Քիչ առաջ այդ նպատակով

ապօրինաբար ձերբակալել են «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի ցուցակը գլխավորող Արամ Հարությունյանին:

Իշխանությունների այս լկտի, ցինիկ վարքագիծը և բանեցվող բռնաճնշումները հուզումների տեղիք են տվել Վարդենիսի բնակչության շրջանում:

<https://www.yerkir.am/news/view/255879.html>

09.12.2021

## **Հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում հակառակորդը կրկին սադրանքի է դիմել՝ ինտենսիվ կրակ բացելով**

Դեկտեմբերի 9-ին ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումները հերթական անգամ սադրանքի են դիմել՝ ժամը 16:25-ից սկսած տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից ինտենսիվ կրակ բացելով հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի մարզի հատվածում տեղակայված հայկական մարտական դիրքերի ուղղությամբ: Հայկական կողմը դիմել է պատասխան գործողությունների: Ժամը 17:00-ի դրությամբ փոխհրաձգությունը շարունակվում էր:

Իրադարձությունների զարգացման վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը պարբերաբար հանդես կգա հաղորդագրություններով:

<https://armkur.am/1153639/>

09.12.2021

## **Հայաստանի ամենաաղքատ մարզը Գեղարքունիքն է. ի՞նչ տեսք ունի աղքատությունն՝ ըստ բնակավայրի, տարիքի ու կրթության**

**2020 թվականին աղքատության մակարդակը Հայաստանում գնահատվել է 27%:**

Վիճակագրական կոմիտեն (ՀՀ ՎԿ) օրերս հրապարակել է 2020 թվականի աղքատության զեկույցը, ըստ որի՝ 2019 թվականի համեմատ աղքատության մակարդակը Հայաստանում 0.6 տոկոսային կետով բարձրացել է:

Թեև աղքատությունը կարող է չափվել տարբեր չափանիշներով և շոշափել կյանքի տարբեր կողմերը՝ առողջություն, կրթություն, իրավունքներ, պարենային անվտանգություն, արժանապատիվ աշխատանքի իրավունք և այլն, սակայն ընդունված է, որ ավելի օբյեկտիվ չափանիշ է սպառումը: Այսինքն՝ մեկ ընտանիքում՝ տնային տնտեսությունում, որքան է կազմում մեկ անձի հաշվով ամսական սպառումը:

Ըստ Վիճկոմիտեի գնահատականների՝ 2020 թվականին աղքատ է համարվել ամսական 44 482 դրամից քիչ ծախսած անձը:

Աղքատության գիծը ծախսերի այն մակարդակն է, որը տնային տնտեսությանն անհրաժեշտ է տվյալ հասարակությունում կենսամակարդակի նվազագույն մակարդակն ապահովելու համար:

Հայաստանում բնակչության 0.7%-ն էլ ծայրահեղ աղքատ է: Ծայրահեղ աղքատ է համարվում անձը, որի ամսական սպառումը 23 828 դրամից ցածր է:

2019 թվականից աղքատության հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է, հետևաբար՝ 2019-2020 թվականների ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների հետ:

2020 թվականին համավարակի, հետագայում՝ նաև պատերազմի հարվածները տնտեսության վրա շրթայաբար ազդեցություն են թողել բնակչության կյանքի վրա, այդ թվում՝ սոցիալական վիճակի: Տարվա կտրվածքով տնտեսությունն անկում է ապրել 7.4%-ով: Վիճկումիտեի զեկույցում, աղքատության մակարդակի բարձրացման մասին տվյալների կողքին, շեշտվում է այս փաստը:

Աղքատության զեկույցից առանձնացրել ենք տվյալներ, որոնք ցույց են տալիս, թե Հայաստանում աղքատության մակարդակը տարիքային որ խմբերում է ավելի բարձր, քանի երեխա ունեցող ընտանիքներում, ինչ մակարդակի կրթության, և թե որ մարզում ինչ իրավիճակ է: Ինչու է այս կամ այն խմբում աղքատությունն ավելի տարածված՝ ուսումնասիրության առանձին թեմա է:

### **Աղքատության ամենաբարձր մակարդակը 6-9 տարեկան երեխաների շրջանում է**

Հայաստանում աղքատության ամենաբարձր մակարդակը 6-9 տարեկան երեխաների շրջանում է՝ 35.7%:

Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում ևս աղքատության մակարդակը բարձր է՝ 34.1%:

Ըստ տարիքային խմբերի՝ աղքատության ամենացածր մակարդակը 45-49 տարեկանների շրջանում է:

Ավագ տարիքի՝ թոշակառուների շրջանում աղքատության մակարդակն ավելի ցածր է, քան միջին հանրապետական ցուցանիշն է (տարիքային խումբը՝ 60-64, 65+ տարեկան): Հիշեցնենք, որ Հայաստանում կենսաթոշակային տարիքը սկսվում է 63 տարեկանից:


Այս ինֆոգրաֆիկայում աղքատության ցուցանիշներն են՝ ըստ տարիքային խմբերի: Ինչպես երևում է, ծայրահեղ աղքատությունը ևս տարբեր է տարիքային խմբերի շրջանում: Եթե ծայրահեղ աղքատության հանրապետական միջին ցուցանիշը 0.7%-ն է, ապա, օրինակ, 18-19 և 20-24 տարեկանների շրջանում այն կրկնակի է՝ 1.4%:

### **Մինչև 6 տարեկան 2 երեխա ունեցող ընտանիքներում աղքատության մակարդակն ավելի բարձր է, քան 3 և ավելի**

Հետաքրքիր է, որ Հայաստանում մինչև վեց տարեկան երեխաներ ունեցող ընտանիքների շրջանում աղքատության ամենաբարձր մակարդակը 2 երեխա ունեցող ընտանիքներում է՝ 43.9%, որը բավականին բարձր է հանրապետական միջին ցուցանիշից՝ 27%-ից:

Մեկ երեխա ունեցող ընտանիքներից աղքատ է 33.1%-ը: Պատկերը շատ չի տարբերվում 3 և ավելի երեխա ունեցողների շրջանում՝ 32.7%:

Աղքատության ամենացածր մակարդակը մինչև 6 տարեկան երեխա չունեցող ընտանիքներում է:



## Գյուղական բնակավայրերում աղքատ ընտանիքներն ավելի շատ են, քան քաղաքներում

2020 թվականին Հայաստանում գնահատված աղքատության 27%-ը միջին ցուցանիշ է, սակայն առանձին վերցրած գյուղերում և քաղաքներում, մարզերում և Երևանում աղքատության մակարդակները տարբեր են:

Ընդհանուր առմամբ, գյուղական բնակավայրերում աղքատությունն ավելի բարձր է: 2020 թվականին գյուղերում այն գնահատվել է 33.6%, քաղաքային բնակավայրերում՝ 22.5%: Մայրաքաղաք Երևանում աղքատության մակարդակը 19.9% է:

Ամենաաղքատը Գեղարքունիքի մարզն է, որտեղ աղքատության մակարդակը գնահատվել է 48.1%: Հաջորդում են Շիրակն ու Տավուշը:

Աղքատության մակարդակը Հայաստանում 2020 թվականին՝ ըստ մարզերի և Երևանի



Աղքատության ամենացածր մակարդակը Սյունիքում է (տե՛ս ինֆոգրաֆիկան):

## Թերի միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր է

16 տարեկանից բարձր և աղքատ գնահատվող բնակչության շրջանում

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Վիճակագրության մասնագետները հարցումներ են արել՝ պարզելու, թե ինչ կրթություն ունեն նրանք:

Պարզվում է՝ թերի միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում աղքատությունն ամենաբարձրն է՝ 34.4%:

Աղքատության ամենացածր մակարդակը բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում է՝ 16.6%:

<https://hetq.am/hy/article/138785>

Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2020թ. (16 և բարձր տարիքի բնակչություն)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

08.12.2021

## **Հոմի Ֆրանցիսկոս պապը Սուրբ Ծնունդը չեղարկելու եվրոպական ջանքերը համեմատում է բռնապետության հետ**

Հոմի Ֆրանցիսկոս պապը մերժել է Եվրահանձնաժողովի ներքին ուղեցույցները, որոնց միջոցով փորձ է արվում վերացնել Սուրբ Ծնունդ հասկացությունը: Հոմի Ֆրանցիսկոս պապը այդ ջանքերը համարել է բռնապետական և զգուշացրել «գաղափարական գաղութացման» մասին:

Անցյալ շաբաթ Եվրահանձնաժողովն առաջարկել է խուսափել «Սուրբ Ծնունդ» բառն օգտագործելուց՝ հոգուտ տոնական օրեր արտահայտության: Այն նաև խորհուրդ է տվել չօգտագործել անուններ, որոնք սովորաբար մեկ կրոնից են, ինչպես օրինակ՝ փոխարինել Մարիամ և Հովհաննես անունները Մալիկա և Խուլիո անվանումներով:

Այս ամենի արդյունքում քրիստոնյաները Եվրոպայում բողոքի մեծ ալիք են բարձրացրել, և անցյալ հինգշաբթի Եվրահանձնաժողովը հետ է կանչել փաստաթուղթը՝ այն անվանելով «ընթացող աշխատանք» և թվիթերում խոստանալով հրապարակել «թարմացված տարբերակը»:

Աղբյուրը՝ [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com)  
<https://nip.am/?p=4444>

06.12.2021

## **Ընտրական հանցագործության 17 հաղորդում՝ Գեղարքունիքի մարզում կայացած ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ**

ՀՀ գլխավոր դատախազության կողմից դիտարկյալ է ենթարկվել նաև 2021թ. դեկտեմբերի 5-ին Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Վարդենիս և Սևան համայնքներում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախընտրական շրջանում և քվերակության ընթացքում առերևույթ ընտրական կամ ընտրություններին առնչվող այլ բնույթի հանցավոր խախտումների վերաբերյալ տվյալների ստացման և ընթացքավորման գործընթացը:

Ըստ այդմ՝ մարզի նշված չորս խոշորացված համայնքներում կայացած ընտրությունների ողջ ընթացքում, մինչև քվերակության ժամկետի ավարտը ստացվել է նմանատիպ հանցագործության առերևույթ դեպքերի մասին ընդհանուր 17 հաղորդում, ահազանգ, որոնցից 3-ը՝ կապված նախընտրական քարոզարշավի հետ, իսկ 14-ը՝ քվերակության: Դրանցից 2-ը ՋԼՄ հրապարակումներ են, 12-ը ֆիզիկական անձանց կողմից տրված հաղորդումներ, 2-ը՝ սոցիալական ցանցերում օգտատերերի կողմից կատարված գրառումներ, իսկ 3-ը՝ ոստիկանության աշխատակիցների կողմից ստացված օպերատիվ տվյալներ:

Ստացված հաղորդումներից և ահազանգերից, մասնավորապես՝

2-ը վերաբերում է մինչև քվերակության օրը ընկած ժամանակահատվածում Վարդենիս և Գավառ համայնքներում առերևույթ ընտրակաշառք տալուն, ստանալուն կամ ընտրակաշառքի միջնորդությանը, 1-ը՝ Վարդենիս խոշորացված համայնքում ընտրողների ուղղորդման միջոցով առերևույթ ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելուն, 7-ը՝ Սևան, Գավառ, Մարտունի խոշորացված համայնքների տարբեր ընտրատեղամասերում առերևույթ կրկնաքվերակության փորձեր կատարելուն, 4-ը՝ Վարդենիս և Գավառ խոշորացված համայնքների

ընտրություններում անձի կողմից իր կատարած քվեարկությունը լուսանկարելու միջոցով առերևույթ քվեարկության գաղտնիությունը խախտելուն, 1-ը՝ Մարտունի խոշորացված համայնքում նախընտրական պաստառի առերևույթ վնասմանը, 2-ը՝ այլ բնույթի:

Ենթադրյալ ընտրական իրավախախտումների վերաբերյալ ընդհանուր 17 հաղորդում-ահագանգերից 2-ի առնչությամբ, հաշվի առնելով դրանց վերացական և ընդհանրական լինելու հանգամանքը, ՀՀ Ոստիկանության մարզային բաժինների կողմից նախաձեռնվել են անհրաժեշտ ստուգողական գործողություններ, որոնք շարունակվում են:

Իսկ մնացած 15 դեպքերի վերաբերյալ հաղորդումները մարզի դատախազության հանձնարարությամբ ուղարկվել են հետաքննության կամ նախաքննության մարմիններ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու նպատակով:

Արդյունքում դրանցից 2-ով, որոնք վերաբերել են նախընտրական շրջանում ստացված առերևույթ ընտրական հանցագործության դեպքերին, որոշում է կայացվել հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Մնացածով նյութերի նախապատրաստման գործընթացը շարունակվում է:

<https://armlur.am/1152641/>

05.12.2021

## Տրդատ Մուշեղյան

### Ծովագյուղում և Սեմյոնովկայում ընտրություններին ոչ ոք չի մասնակցել, քանի որ դեմ են խոշորացմանը

Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ և Սեմյոնովկա գյուղերում այսօր բնակիչներից և ոչ մեկը չի մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններին: Այս մասին վկայում են ՏԻՄ ընտրությունների քվեարկության մասնակիցների վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած [տվյալները](#):

20	Սեվան	Ծովագյուղ գյուղ	20/18	1299	0	0.00
20	Սեվան	Ծովագյուղ գյուղ	20/19	1628	0	0.00
20	Սեվան	Սեմյոնովկա գյուղ	20/20	195	0	0.00

Հասկանալու համար, թե ինչով է պայմանավորված ընտրողների այս միասնական որոշումը, կապվեցինք Ծովագյուղի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար [Վահրամ Գևորգյանի](#) հետ: Նա նշեց, որ ընտրություններին չմասնակցելու պատճառը համայնքների խոշորացումն է:

Նշենք, որ խոշորացման գործընթացի շրջանակում Ծովագյուղ և Սեմյոնովկա գյուղերը պետք է ընդգրկվեն Սևան խոշորացված համայնքի կազմում:

Վահրամ Գևորգյանը նշեց, որ այս ձևաչափով խոշորացում ծովագյուղիները չեն ցանկանում և իրենց բողոքը արտահայտել են ընտրություններին չմասնակցելով:



«[Խորհրդարանական լսումների](#) ժամանակ ես հիմնավորված, փաստերով ներկայացրել եմ, թե ինչու է խոշորացումը սխալ: Ծովագյուղ համայնքում միայն 2021 թվականին էնքան աշխատանք է կատարվել, որ Գեղարքունիքի մարզի ոչ մի քաղաքում կամ մեծ գյուղում չի արվել: Եթե համեմատես բոլոր գյուղերում ու բոլոր քաղաքներում կատարված աշխատանքը, կտեսնես, որ Ծովագյուղը ամենաառաջինն է», - նշեց Վահրամ Գևորգյանը:

Ծովագյուղի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի խոսքով՝ խոշորացումը կատարվում է նրա համար, որպեսզի համայնքը զարգանա, սակայն այս պահին, ըստ Գևորգյանի՝ Ծովագյուղը զարգանում է, իսկ մյուս համայնքները իրենց հավասար չեն զարգանում: Վահրամ Գևորգյանը վստահ է, որ Սևանին միավորվելը խոչընդոտելու է Ծովագյուղի զարգացմանը:

Նույն պատճառով ընտրություններին չեն մասնակցել նաև Մեմյոնովկա համայնքի բնակիչները: Համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար [Դավիթ Մնացականյանը](#) «Հետքի» հետ զրույցում նշեց, որ գյուղացիները հիասթափված են և որոշել են ընտրություններին չմասնակցել, դա իրենց կամքն է:

«Հիասթափության պատճառը խոշորացումն է», - շեշտում է Դավիթ Մնացականյանը՝ հավելելով, որ եթե Մեմյոնովկան պետք է ընգրկվեր խոշորացման գործընթացում, ապա գյուղացիները ցանկանում էին, որ համայնքը միավորվեր Ծովագյուղի հետ, Սևանին միավորվել չեն ցանկանում: Հարցին, թե ինչու չեն ցանկանում միավորվել Սևանին, Դավիթ Մնացականյանն ասաց, որ դա բնակիչների ցանկությունն է, և ինքը մեկնաբանել չի կարող:

Հավելենք, որ Ծովագյուղ համայնքում ընտրելու իրավունք ունի 2927 քաղաքացի, իսկ Մեմյոնովկայում՝ 195: 17:00-ի դրությամբ այդ երկու գյուղի բնակիչներից և ոչ մեկը քվեարկությանը չի մասնակցել:

Սևան խոշորացված համայնքում ավագանու ընտրություններին մասնակցում է երեք քաղաքական ուժ՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն», «Հանրապետություն» կուսակցություններն ու «Մարզիս Մուրադյան» դաշինքը:

<https://hetq.am/hy/article/138633>

05.12.2021

## **Մարտունու ավագանու ընտրություններում պայքարում է 6 կուսակցություն**

Այսօր՝ դեկտեմբերի 5-ին, Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են: Համամասնական ընտրակարգով համայնքների ղեկավարման մարմիններ են ընտրելու Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի 36 համայնքի բնակիչներ: Մինևույն ժամանակ Արագածոտնի Արևուտ և Մեծաձոր համայնքներում անցկացվելու են մեծամասնական ընտրակարգով ընտրություններ: Ըստ օրենքի, համամասնական կարգով ընտրում են 4000 և ավելի բնակչություն ունեցող համայնքներում, մեծամասնական՝ 4000-ից քիչ բնակչություն ունեցող համայնքներում: Համամասնական ընտրակարգով ընտրությունների ղեկավարում քաղաքացիներն ընտրելու են ավագանի, որն էլ համայնքի ղեկավար է նշանակելու:

Գեղարքունիքի համայնքները 4-ն են՝ Մարտունին, Գավառը, Սևանը և Վարդենիսը: Մարզում ընտրելու իրավունք ունի 164088 քաղաքացի:

Մարտունիում գրանցված թեկնածուներն ամենաշատն են մարզում՝ 6-ը: Դրանք են՝ «Ալաշկերտ» կուսակցությունների դաշինքը, «Ապրելու երկիր» կուսակցությունը, «Արդար Հայաստան»-ը, «Լուսավոր Հայաստան»-ը, «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը և «Քաղաքացիական պայմանագիր»-ը: Ընտրատեղամասերի ընդհանուր քանակը 41 է:

«Ալաշկերտ» կուսակցությունների դաշինքը գլխավորում է Մարտունու ԲԿ բժիշկ-անեսթեզիոլոգ Սեդրակ Սահակյանը: Նա «Հայաստանի Հանրապետական» կուսակցության անդամ է:

«Ապրելու երկիր» կուսակցությունը գլխավորում է «Էյ Էմ շին» ՄՊԸ տնօրեն Արամ Մանուկյանը:

«Արդար Հայաստան» կուսակցությունը գլխավորում է Արարատ Խաչատրյանը:

«Լուսավոր Հայաստան»-ի ընտրացուցակը գլխավորում է անկուսակցական Նադաշ Հակոբյանը, մասնագիտությամբ՝ ատամնաբույժ:

«Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը գլխավորում է Ռադիկ Հարությունյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը գլխավորում է Վարդենիկ համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

Մարտունի համայնքի գործող ղեկավար Արմեն Ավետիսյանը չի առաջադրվել:

Գավառում գրանցված թեկնածուները 3-ն են՝ «Գուրգեն Մարտիրոսյան» կուսակցությունների դաշինքը, «Մեր համայնքը» կուսակցությունների դաշինքը և «Քաղաքացիական պայմանագիր»-ը: Ընտրատեղամասերի ընդհանուր քանակը 30 է:

Սևանում թեկնածուները 3-ն են՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն, «Հանրապետություն» կուսակցություն, «Սարգիս Մուրադյան» կուսակցությունների դաշինք: Ընտրատեղամասերի ընդհանուր քանակը 24 է: Այստեղ «Քաղաքացիական պայմանագիր»-ը թեկնածու չունի:

Վարդենիսում ևս գրանցված թեկնածուները 3-ն են՝ «Ահարոն Հովհաննիսյան» կուսակցությունների դաշինք, «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինք, «Քաղաքացիական պայմանագիր»: Այստեղ կա 39 ընտրատեղամաս:

## **Աննա Արզումանյան**

<https://hetq.am/hy/article/138589>

02.21.2021

## **Գեղարքունիքի մարզպետն ու ՌԴ դեսպանը քննարկել են մարզի սահմանային իրավիճակը**

Տեղի է ունեցել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Մարգարյանի և Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի հանդիպումը:

Կողմերը քննարկել են տարածաշրջանում սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը, ռուսական ընկերությունների գործունեությունը մարզում, մարզպետի՝ առաջիկայում կայանալիք աշխատանքային այցը ՌԴ Օմսկի մարզ:

Քննարկվել է նաև միջտարածաշրջանային համագործակցության ներկա վիճակն ու հեռանկարները, ինչպես նաև մարզի սահմանային իրավիճակը:

<https://politik.am/am/gexarquniqi-marzpetn-u-rd-despany-qnnarkel-en-marzi-sahmanayin-iravichaky>

01.12.2021

## **Գեղարքունիքի Լիճք գյուղում հրդեհի հետևանքով անկել է 500 գլուխ կենդանի**

Դեկտեմբերի 1-ի գիշերը հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի բնակիչ Շիրակ Խալոյանին պատկանող գոմում: Այս մասին հաղորդում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը:

Դեպքի վայր են գնացել նաև ՍՍՏՄ Գեղարքունիքի մարզային կենտրոնի տեսուչները:

Ստացված տեղեկատվության ամփոփումից հետո պարզ է դարձել, որ հրդեհի պատճառով անկել է 500 գլուխ մանր եղջերավոր և 25 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:

200 գլուխ մանր եղջերավոր կենդանիների փրկել են փրկարարական ծառայության աշխատակիցները:

Միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ՝ անկած կենդանիները կթաղվեն հատուկ այդ նպատակով հատկացված անասնազերեզմանոցում:

<https://hetq.am/hy/article/138427>